37.022 *https://orcid.org/0000-0003-2884-7935* **DOI:10.46991/ai.2023.1.191**

SOCIO-PEDAGOGICAL NATURE AND ORIENTATION OF GROUP INTERACTIVE ART THERAPY TECHNOLOGIES

Lusine Hayrapetyan
PhD, Associate Professor
Yerevan State University, Armenia
lusine.hayraoetyan@ysu.am

Summary

Group interactive art therapy is a way to solve various socio-pedagogical problems. Each group interactive art therapy technology works with the concept of the child's "I", offering new solutions to problems that the child independently identifies through group activity, using the resources of creativity, awakening of inner abilities, talents and self-understanding. Depending on what task this group interactive art therapy solves, groups are divided according to different methodologies: according to the socio-pedagogical goal, according to the age characteristics of children, according to the use of various communication models, etc. Since the goals of individual art therapy technologies and group interactive art technologies are different, we can say that they solve different tasks and develop children's independent abilities for psychoregulation, correction of emotional deformations, discharge and loading of the spiritual world.

Keywords: group interactive art therapy, art technologies, emotional deformation, communicative model, interaction.

СОЦИАЛЬНО-ПЕДАГОГИЧЕСКИЙ ХАРАКТЕР И НАПРАВЛЕННОСТЬ ГРУППОВЫХ ИНТЕРАКТИВНЫХ АРТ-ТЕРАПЕВТИЧЕСКИХ ТЕХНОЛОГИЙ

Айрапетян Лусине
Кандидат педагогических наук, доцент
Ереванский государственный университет, Армения
lusine.hayraoetyan@ysu.am

Аннотация

Групповая интерактивная арт-терапия – это способ решения различных социально-педагогических проблем. Каждая групповая интерактивная арт-терапевтическая технология работает с концепцией «Я» ребенка, предлагая новые варианты решения проблем, которые ребенок самостоятельно выявляет через групповую деятельность, используя ресурсы творчества, пробуждения внутренних способностей, талантов и самопонимания. В зависимости от того, какую задачу решает данная интерактивная арт-терапия, создаются группы, которые различаются по различным методологиям: социально-педагогические цели, возрастные особенности детей, применение различных моделей коммуникаций и т.д. Так как цели индивидуальных арт-терапевтических технологий и групповых интерактивных арт-технологий различны, можно сказать, что они решают различные задачи и развивают у детей самостоятельные способности к психорегуляции, коррекции эмоциональных деформаций, разрядке и загрузке духовного мира.

Ключевые слова: групповая интерактивная арт-терапия, арт-технологии, эмоциональная деформация, коммуникативная модель, взаимодействие.

ԽՄԲԱՅԻՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԱՐՏԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայրապետյան Լուսինե
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան, Հայաստան
lusine.hayraoetyan@ysu.am

Խմբային ինտերակտիվ արտթերապիան սոցիալ-մանկավարժական տարատեսակ խնդիրներ լուծելու ուղի է: Յուրաքանչյուր խմբային ինտերակտիվ արտթերապևտիկ

տեխնոլոգիա աշխատում է երեխայի «Ես» կոնցեպցիայի հետ՝ առաջարկելով խնդիրների լուծման նոր տարբերակներ, որոնք ինքնուրույն դուրս է բերում երեխան խմբային գործունեության միջոցով՝ ստեղծարարության, ներքին ձիրքերի արթնացման, ինքնահասկացման ռեսուրսներ օգտագործելով: Կախված այն հանգամանքից, թե ինչ խնդիր է լուծում տվյալ խմբային ինտերակտիվ արտթերապիան, խմբերը կարող են բաժանվել տարբեր մեթոդաբանությամբ՝ ըստ սոցիալ-մանկավարժական նպատակի, ըստ երեխաների տարիքային առանձնահատկության, ըստ հաղորդակցման տարբեր մոդելների կիրառության: Անհատական ու խմբային արտթերապևտիկ տեխնոլոգիաների նպատակները տարբեր են, ուստի կարելի է ասել, որ դրանք լուծում են տարբեր խնդիրներ և զարգացնում հոգեկարգավորման, հուզական դեֆորմացիաների շտկման, հոգեկան աշխարհի լիցքաթափման ու լիցքավորման ինքնուրույն ունակություններ երեխաների մոտ:

Բանալի բառեր: Խմբային ինտերակտիվ արտթերապիա, արտտեխնոլոգիաներ, հուզական դեֆորմացիա, հաղորդակցական մոդել, փոխգործակցություն:

Հետազոտության նպատակն է բացահայտել արտթերապիայի խմբային տեխնոլոգիաների դերը սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծման գործում:

Խնդիրներն են ներկայացնել խմբային ինտերակտիվ արտտեխնոլոգիաների առանձնահատկությունները, դրանց հնարավորությունները երեխաների հետ տարվող սոցիալ-մանկավարժական աշխատանքներում:

Հետազոտական հիմնահարցը: Քանի որ արտթերապևտիկ տեխնոլոգիաները հիմնականում անհատական բնույթ ունեն, ապա մեր կողմից փորձ է արվել հիմնավորելու խմբային ինտերակտիվ արտտեխնոլոգիաների արդյունավետությունը երեխաների հետ տարվող սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծման գործում:

Հետազոտության հիմնախնդրի մասին գրականության մշակվածության ու վերլուծության աստիճանը: Հիմնախնդրի վերաբերյալ ուսումնասիրություններ ունի Ա. Կոպիտինը, որը մանրամասն վերլուծել է խմբային ինտերակտիվ արտթերապիայի ձևերը: Խմբային ինտերակտիվ արտթերապևտիկ տեխնոլոգիաների զարգացնող և մոտիվացիաներ առաջացնող գործառույթների գիտատեսական հիմքերը հիմնավորվել են Ֆոլկսի, Գ.Սալիվանի ու Ի. Յալոմի առաջադրած դրույթների վրա:

Հիմնական նյութի շարադրանքը: Արտթերապևտիկ տեխնոլոգիաները, հոգեբանության, բժշկության, մանկավարժության և արվեստի յուրահատուկ համակցության արդյունք լինելով, բազմաֆունկցիոնալ կիրառություն ունեն մեր օրերում: Դրանցով կարելի է ախտորոշել, ապա՝ լուծել բազմատեսակ խնդիրներ, որոնց բնույթը նույնպես կարող է տարբեր լինել՝ հոգեբանականից մինչև բժշկական, մանկավարժական: Արտթերապևտիկ տեխնոլոգիաների ընտրությունը կախված է նպատակից, դուրս բերած խնդիրներից ու անձի տիպից: Այդ տեխնոլոգիաներն են՝ երաժշտաթերապիան, բիբլիոթերապիան, իզոթերապիան, տիկնիկաթերապիան, պարային թերապիան, հեքիաթաթերապիան, որոնք հիմնականում ունեն անհատական բնույթ: Սակայն սոցիալ-մանկավարժական խնդիրների լուծման տեսանկյունից այսօր արդեն հետաքրքրական են դարձել արտտեխնոլոգիաների խմբային կիրառությունները, որոնք ունեն ինտերակտիվ՝ փոխներգործուն բնույթ: Խմբային ինտերակտիվ արտթերապիա անցկացնելու համար շատ կարևոր է հստակեցնել դրա տարբեր ձևերը, որոնք իրարից առանձնանում են իրենց հատկանիշներով: Դրանց համար հիմք են հանդիսացել խմբերի հատկանիշները՝ կառուցվածք՝ տարասեռ, համասեռ, աշխատանքի համար պահանջվող տևո-

ղություն՝ կարճաժամկետ, երկարաժամկետ և այլն: Որքան քիչ է արտթերապևտիկ աշխատանքի տևողությունը, այնքան մակերեսային են խմբի անդամների միջև ձևավորված հարաբերությունները: Ի տարբերություն վերոշարադրյալի՝ դինամիկ խմբում արտթերապևտիկ աշխատանքի ժամանակատարությունն ու երկարատևությունը օգնում են առավել խորը ու փոխներգործուն փոխհարաբերությունների կառուցմանը:

Խմբային ինտերակտիվ արտթերապևտիկ տեխնոլոգիաները հենվում են հաղորդակցական տարբեր մոդելների միահյուսման, համակցման վրա, ինչի արդյունքում էլ երեխայի անհատական ստեղծագործական ներուժի օգտագործման և աշխատանքում դրա ներդրման միջոցով հնարավոր է դառնում կազմակերպել մասնակիցների միջև փոխգործակցություն:

Խմբային ինտերակտիվ արվեստի թերապիայի բովանդակային հենքն են կազմում գեղարվեստական, մանկավարժական, հոգեբանական, հոլիստիկ առողջության հիմնարար դրույթները, սկզբունքներն ու գաղափարները, որոնք զգայաճանաչողական ակտիվության բարձրացման շնորհիվ հնարավոր են դարձնում անցյալի փորձառությունների ու ներկայի ապրումների, զգացմունքների միջև կապի ստեղծումը:

Խմբային ինտերակտիվ արտթերապիան ներառում է հոգեթերապևտիկ զգալի հնարավորություններ: Միևնույն ժամանակ խմբում աշխատելը կարող է երեխայի անձնային ոլորտի ձևավորման ընթացքում մեծ փոփոխություններ առաջ բերել, ինչպիսին են ինտերստիմուլյացիան ու փոխադարձ ինդուկցիան, մասնակիցները կարող են ունենալ վառ զգացումներ [4, 27]: Խմբում աշխատելու ընթացքում նրանք իրենց ընկերներից ստանում են լրացուցիչ քանակությամբ տեղեկատվություն, որը գալիս է տեսողական և հաղորդակցման այլ ուղիներով [3]: Այս տեղեկատվության վերամշակումը մեծ ծանրաբեռնություն կարող է առաջացնել երեխայի ճանաչողական գործընթացների վրա: Խմբում կարող են դրսևորվել վարքի տարբեր մոդելներ և միմյանց հետ հաղորդակցվելու տարբեր եղանակներ, ինչը կարող է հանգեցնել լարվածության, երբեմն բախումների՝ միմյանց հետ հարաբերություններում: Հետևաբար ինտերակտիվ խմբերին մասնակցելը ունի համապատասխան ցուցումներ և հակացուցումներ, նախապատրաստության փուլեր, կազմակերպման առանձնահատկություններ:

Ինտերակտիվ խմբերի հետ աշխատելը նաև մեծ պատրաստվածություն է պահանջում արտթերապևտից, որը պետք է հստակ իմանա ոչ միայն խմբերի ընդհանուր հատկություններն ու առնաձնահատուկ կողմերը, այլև արտթերապիայի ռեսուրսայնությունը, թե հնարավոր ու արդյունավետ է արդյոք տվյալ թերապիայի տեսակը խմբային կիրառության համար:

Առանձնացնում ենք խմբային ինտերակտիվ արտթերապիայի հետևյալ հիմնական ձևերը՝

- բաց խումբ,
- փակ խումբ,
- դինամիկ (վերլուծական) խումբ,
- թեմատիկ խումբ:

Առաջին խմբի անվան մեջ «բաց» բառը նշանակում է, որ խմբերի ձևավորման գործընթացը ազատ է. չկան կայուն խմբեր, դրանցում անդամներն անընդհատ փոփոխվում են: Աշխատանքի ցանկացած փուլում խմբին կարող են միանալ նոր մասնակիցներ կամ ցանկացած պահի կարող են դադարեցնել մասնակցությունը:

«Փակ խումբ» ասելով՝ հասկանում ենք, որ աշխատանքի բոլոր փուլերի ընթացքում դրա մասնակիցների կազմը մնում է անփոփոխ: Դինամիկ կամ վերլուծական է խումբը

կոչվում այն պատճառով, որ խմբի անդամների գործողությունները ենթադրում են զգալի ինքնաբուխություն, և մանկավարժի կողմից ենթադրվում է նվազագույն հրահանգ:

Մանրամասնելով խմբերի առանձնահատկությունները՝ պարզ է դառնում, որ բաց խմբի հետ դասընթացներն անցկացվում են հատուկ սարքավորումներով նախատեսված սենյակներում, որոնցում առկա են սահմանափակ թվով տեղեր՝ նախատեսված գեղարվեստական աշխատանքի համար: Խմբի աշխատանքը սկսելուց առաջ մանկավարժը բացատրում է վարքի ընդհանուր կանոնները, հետո՝ ներկայացնում առաջադրանքները:

Այս աշխատանքներն ընդգծված տարբերություն ունեն ավանդական գեղարվեստական գործունեությունից, քանի որ խրախուսվում են ազատ ստեղծագործական ինքնարտահայտումը, խմբի անդամների հուզական լիցքաթափումը, զգացմունքների, մտքերի ու երևակայության պատկերները վիզուալացնելու՝ նկարելու, ծեփելու, փորագրելու ընթացքը:

Կարևոր է երեխաներին սովորեցնել զգալ իրենց «անձնական տարածքը» և չխանգարել մյուսին իր տարածքում ստեղծագործելու ժամանակ, նույնիսկ եթե հանձրարարությունը խմբային է: Սա ձևավորում է երեխայի մոտ իր ընկերոջը հարգելու, չխանգարելու, համբերությամբ սպասելու հատկություններ: Հատկապես կարևոր է սովորեցնել երեխաներին, որ չմիջամտեն իրենց ընկերոջ գեղարվեստական աշխատանքի ստեղծման գործընթացին, չգնահատեն մեկը մյուսի աշխատանքը ընթացքում, քանի որ նրանք աշխատում են տարբեր արագությամբ և տարբերվում են «ազատ գեղարվեստական արտահայտման» պատրաստակամության տարբեր աստիճաններով: Մանկավարժը պետք է ունենա բավարար ճկունություն՝ անհրաժեշտության դեպքում խմբի անդամներին տրամադրելով անհատական օգնություն, որը կարող է արտացոլվել նրանց գործողությունների կառուցվածքի, հուզական արտահայտման դյուրացման, հուզական աջակցության և այլնի մեջ: Այս ամենը նպաստում է մթնոլորտի ստեղծմանը, հուզական լարվածության թուլացմանը, տագնապայնության հաղթահարմանը:

Երեխաները պետք է իրենց ազատ զգան, և մանկավարժի կողմից չպետք է դրսևորվի վերահսկման ակտիվություն: Նա պետք է ձեռնպահ մնա խրախուսական արտահայտություններից, քանի որ յուրաքանչյուր երեխա հուզական ինքնադրսևորման իր մոդելով է աշխատելու: Ոմանց համար կարող է օգտակար ու հաճելի լինել նույնիսկ պարզապես խմբային ինտերակտիվ արտթերապիայի ստեղծած մթնոլորտում լինելը՝ նվազագույն ընդգրկմամբ: Չնայած այն հանգամանքին, որ տեսողական աշխատանքի ընթացքում խմբի անդամների միջև բանավոր շփումը նվազագույնի է հասցված, և խումբը բաց է, որոշ ժամանակ անց խմբում ձևավորվում է որոշակի ոչ վերբալ հաղորդակցման մշակույթ:

Դինամիկ խմբում խմբային ընդհանուր նպատակների կողքին հետաքրքիր է ուսումնասիրել երեխայի անհատական դրսևորման ձևերը, մասնավորապես համատեղ նկարչության, հեքիաթաթերապիայի կամ բիբլիոթերապիայի ժամանակ: Դինամիկ խմբերում բանավոր հաղորդակցությունը կարելի է իրականացնել խմբային քննարկումների ընթացքում կամ խմբի անդամների ստեղծած աշխատանքի շուրջ կամ գործունեության այլ տեսակների ընթացքում (խաղեր, դրամատիկ ներկայացումներ, դերային երկխոսություններ, մարմնաշարժողական վարժանքներ և այլն): Խմբի անդամները ստեղծագործական աշխատանքի վերջնարդյունքում կարող են ակտիվ փոխներգործություն ունենալ միմյանց վրա: Այդպիսի հետաքրքիր վարժանքներ են առաջարկում իզոթերապևտիկ որոշ տեխնիկաներ [2, 64], օրինակ՝ համատեղ ոչ վերբալ

հաղորդակցման միջոցով զույգերով թեմայի ընտրություն կատարելը և միասին մեկ նկար ստեղծելը: Հետաքրքիր է նաև երաժշտաթերապիայի մեջ երեխաների ընդգրկվածությունը, երբ յուրաքանչյուր երեխա հանդես է գալիս երաժշտական գործիքի տեսքով, և տարբեր երաժշտական գործիքներ ընտրում են իրենց «ընկերներին», ստեղծում համատեղ երաժշտություն: Հեքիաթաթերապիան ևս խմբային գործունեություն ծավալելու մեծ ռեսուրս է պարունակում [5, 56]: Երեխաները լսում են իրենց ընկերների հեքաթները, պատմում, լրացնում, փոխում, գրի առնում այդ հեքաթները և բարձրաձայնում, կամ երեխաները համատեղ հեքիաթ են հորինում են, միասին փոխում են հեքիաթի ընթացքը [1, 71]:

Խմբային ինտերակտիվ արտթերապևտիկ տեխնոլոգիաները միտված են առավել ներառական դարձնելու երեխայի միջավայրը, օգնելու նրան հուզական լիցքաթափման հարցում, բացահայտելու ներքին ռեսուրսները, սովորեցնելու թիմային աշխատանքին, միևնույն ժամանակ հոգեկարգավորման մեխանիզմներն ակտիվացնելու երեխայի հոգեկանում:

Եզրակացություն: Ամփոփելով կարելի է ասել, որ խմբային ինտերակտիվ արտթերապևտիկ տեխնոլոգիաների կիրառությունները կարող են նպաստել երեխաների մոտ հաղորդակցման առավել արդյունավետ մեխանիզմներ զարգացնելու գործում: Համատեղ ստեղծարար գործունեության արդյունքում երեխաները կարող են ձեռք բերել հանդուրժաղականություն, հարգանք միմյանց հանդեպ, խնդիրների բազմակողմանի ընկալում, լուծումների տարբերակների ինքնուրույն մշակում, թիմային գործունեության ժամանակ անհատական մոտեցման դրսևորում և այլն:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ղազարյան Գ., Գալստյան Ա., Մուրադյան Ե., Հեքաթաթերապիայի տեսություն և պրակտիկա, ուսումնական ձեռնարկ, Երևան, հեղ. հրատ., 2017:
2. Козлов В., Пермина С., Основы интегративной арт-терапии:теория и практика, Изд. ПП Петросян, Москва, 2022:
3. Копытин А. И., Групповая арт-терапия, 2016, http://psihdocs.ru/gruppovaya-art-terapiya.html?-page=2, 03.03.2023, 20, 30.
4. Салливан Г. , Роттер Дж., Мишел У., Теория межличностных отношений и когнитивные теории личности, 2007.
5. Ткач Р. М., Сказкотерапиа детских проблем, СПб.: «Речь», М.: «Сфера», 2008.

Получено: 02. 05. 2023 *Received: 02. 05. 2023*
Рассмотрено: 08. 05. 2023 *Reviewed: 08. 05. 2023*
Принято: 18. 05. 2023 *Accepted: 18. 05. 2023*

Journal ''Education in the 21st Century'', Vol1-9/1/, 2023

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License